Խանջյան համայնքի ղեկավարի հաշվետվությունը 2012 թվականի առաջին կիսամյակի գործունեության վերաբերյալ

«13» Հունիս 2012թ. Գ.Խանջյան

Հարգելի Խանջյան համայնքի բնակիչներ, այսօրվա ժողովում ես Ձեզ կներկայացնեմ 2012 թվականի առաջին կիսամյակում կատարված աշխատանքների, բյուջեի կատարողականի,առկա հիմնախնդիրների մասին :Վերջում ակնկալում եմ, որ կծավալվի ակտիվ քննարկում,մտքերի փոխանակում,հարց ու պատասխաններ,առաջարկություններ:
Գյուղատնտեսության համար գարնան անբարենպաստ եղանակը ազդեց բնակչության սպասվելիք. եկամուտների վրա, որը անդրադարձավ բյուջեյի եկամուտների հավաքագրման աշխատանքների գործընթացին: Սակայն մենք կաշխատենք հնարավորինս ապահովել 2012 թվականի բյուջեյում նախատեսված սեփական եկամուտների հավաքագրման բարձր տոկոս:

Խանջյան համայնքի 2012 թվականի գյուղապետարանի բյուջեն մուտքային և ծախսային մասով կազմում է առ 01.07.2012թ. 29 329, 0 հազար դրամ:
Առկա բյուջեով նախատեսված է լուծել Խանջյան համայնքում ծառացած հիմնախնդիրները:
Արմավիրի մարզի Խանջյան գյուղապետարանի բյուջեն մուտքային և ծախսային մասով ունի հետևյալ տեսքը

մուտքային մաս

	նախատեսված	կատարված	տոկոս
1. հողի հարկ	8900,0 հ.դ.	359.2 հ.դ.	4.0%
2. գույքահարկ	1500,0 հ.դ	245.5հ.դ.	16.4%
3. տեղական տուրք	153,5 հ.դ.	0 հ.դ	0%
4. ոչ հարկային եկամուտ			
ա) հողի վարձավճար	350.0հ.դ	0հ.դ.	0%
5. դոտացիա	17105.5 հ.դ.	8552.8 հ.դ.	50%
6. տարեվերջին ազատ մնացորդ	1661.6 հ.դ.		
ա) ֆոնդային բյուջե	1511.6 հ.դ.		
բ) վարչական բյուջե	150. հ.դ.		

Բյուջեյի եկամուտների ցածր տոկոսը պայմանավարված է գարնան անբարենպաստ պայմաններից:

ծախսային մաս

	վարչական	ֆոնդային մաս
1.տեղական ինքնակառավարում	18896,0 հ.դ	1618.0 հ.դ.
2.գրադարան	585.0 հ.դ.	100.0 հ.դ
3.կուլտուրայի տուն	1235,0հ.դ.	1411.6 հ.դ.
4.կրթություն	585,0 հ.դ.	
5.այլ մշակութային կազմակերպություն	500,0 հ.դ.	
6.շրջակա միջավայրի պաշտպանություն	960,0 հ.դ.	
7.սոցիալական պաշտպանություն	2000,0 հ.դ.	
8.պահուստային ֆոնդ	2118,0 հ.դ.	
9.տնտեսական հարաբերություններ	2100.0 հ.դ.	
10բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն		500.0 հ.դ.

Խանջյան համայնքում կազմակերպվել է մի շարք միջոցառումներ՝

1.Կատարվել է փողոցների և գերզմանատան միջավայրի սան. մաքրում, ինչպես նաև սաղավատար առուների մաքրում:

2.Դաշտամջյան և գյուղի փողոցների մասնակի ավազալցման աշխատանքներ:

Ռազմավարական կտրվացքով Խանջյան համայնքի սոցիալ տնտեսական վիճակը բարելավելու համար ընտրվել է հետևյալ ուղվածությունները՝

1.Բուժ կետի շենքային պայմանների բարելավում:
2. Մանկապարտեզի շենքի վերանորոգում:
3.Համայնքային ճանապարհների բարեկարգում:
4.Ջրոսայգում հանգստի և ժամանցի պայմանների կազմակերպման շինարարական աշխատանքներ:

Սակայն համայնքում առկա են դեռ լուծում պահանջող հիմնախնդիրներ:

Խանջյան համայնքի ղեկավար՝ Ս.Ավագյան